ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 98-րդ և 99-րդ հոդվածները, Ձեզ ենք ներկայացնում Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կողմից առաջարկվող Ազգային ժողովի հայտարարության նախագիծը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԽԱԽՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ՝ այն սահմանված կարգով շրջանառության մեջ դնելու նպատակով:

Կից ներկայացվում են հայտարարության նախագիծը (հիմնական զեկուցող Էլինար Վարդանյան), դրա հիմնավորումը, ինչպես նաև «Հայաստան» խմբակցության որոշումը (նիստի արձանագրությունից քաղվածքը):

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

12.11.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԽԱԽՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

(Քաղվածք խմբակցության նիստի արձանագրությունից)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 98-րդ հոդվածով և 99-րդ հոդվածով,

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետությունում առկա քաղբանտարկյալների եվ նրանց խախտված իրավունքների վերականգնման մասին» «Հայաստան» խմբակցության կողմից ներկայացվող Ազգային ժողովի հայտարարության նախագծին (կցվում է) և այն սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հայտարարության նախագծով հիմնական զեկուցողը «Հայաստան» խմբակցության պատգամավոր Էլինար Վարդանյանն է:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

12.11.2025թ.

նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԽԱԽՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում արձանագրվող ժողովրդավարության հետընթացը, որի բաղկացուցիչ մասն են կազմում խոսքի, խղճի, հավաքների ազատությունների կոպիտ ոտնահարումները, ԶԼՄ-ների հանդեպ ճնշումները, շինծու քրեական գործերը քաղաքական այլ հայացքներ ունեցող գործիչների եւ քաղաքացիների նկատմամբ, ընտրովի արդարադատությունը, կոռուպցիայի ահագնացող մակարդակը, դրսեւորվում է նաեւ աննախադեպ թվով քաղաքական բանտարկյալների առկայությամբ:

Իշխանությունը վերածվել է քաղաքական հետապնդումների, հալածանքների և հաշվեհարդարի բացահայտ գործիքի: Իշխող վարչախմբի գործողություններն ուղղված են երկրում վախի մթնոլորտ սերմանելուն, իշխանությունն ամեն գնով պահելուն, որոնք հանգեցնելու են իրավական պետության հիմքերի խաթարմանն ու սահմանադրականության վերջնական տապալմանը:

Բռնաճնշումների շարունակվող ալիքի ընթացքում ձերբակալվել են, կալանավորվել, տնային կալանքի են ենթարկվել և/կամ անարդար դատավճիռներով դատապարտվել են՝

-Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին ներկայացնող արքեպիսկոպոսներ, հոգևոր սպասավորներ և ծառայողներ,

- Հայրենիքի պաշտպանության գործում իրենց կյանքը նվիրաբերած զինծառայողների ընտանիքների անդամներ և/կամ հարազատներ,

- Ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների ղեկավար մարմինների և երիտասարդական միությունների անդամներ քաղաքական և քաղաքացիական գործունեություն իրականացնող և/կամ իշխանություններին քննադատող անձինք,

-Հասարակական և բարեգործական գործունեություն իրականացնող անձինք,

-Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության Ազգային ժողովների պատգամավորներ,

- Համայնքի ղեկավարներ, ավագանիներ և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ:

Ազատությունից զրկված վերը նշված բազմաթիվ քաղաքացիները, համաձայն ԵԽԽՎ 2012թ. թիվ 1900 բանաձևով սահմանված չափանիշների, ամբողջությամբ համապատասխանում են քաղբանտարկյալի կարգավիճակին:

Այսպես, համաձայն վերոնշյալ բանաձևի՝ քաղբանտարկյալի կարգավիճակը փաստվում է երբ՝

- Կալանավորումն իրականացվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և նրա արձանագրություններում արտացոլված հիմնարար երաշխիքների, մասնավորապես՝ մտքի, խղճի և կրոնի ազատության, արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության, հավաքների և միավորումների ազատության երաշխիքներից որևէ մեկի խախտմամբ:
- Ազատությունից զրկումը իրականացվել է բացառապես քաղաքական դրդապատճառով, խտրականորեն՝ համեմատած այլ անձանց հետ, ակնհայտ անարդար ընթացակարգերի գործադրմամբ և/կամ կալանավորման ժամկետը կամ պայմանները անհամաչափ են ենթադրյալ արարքին:

Ելնելով վերոգրյալից՝ աներկբա արձանագրում ենք, որ ՀՀ բազմաթիվ քաղաքացիներ զրկվել են ազատությունից կամ հետապնդվում են ոչ թե հանցանքի, այլ իրենց գաղափարների, խոսքի և դիրքորոշման համար, որոնց առնչությամբ առկա են խտրական և տարբերակված մոտեցումներ:

Հաշվի առնելով վերոնշյալը, լրջագույն մտահոգություն արտահայտելով Հայաստանի Հանրապետությունում ավտորիտարիզմի կտրուկ աճի և երկրում սահմանադրական, քաղաքական և մարդու իրավունքների լիակատար ճգնաժամի հեռանկարի կապակցությամբ, վերահաստատելով այս և այլ քաղաքական հետապնդումների առնչությամբ տրվող գնահատականները, հավատարիմ մնալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների առջև ստանձնած առաքելությանը և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին, առաջնորդվելով ԵԽԽՎ վեհաժողովի հաստատումներով, որը ներառում է քաղբանտարկյալներին անհապաղ ազատ արձակելու պարտադիր կոչ՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը

- արձանագրում է, որ քաղաքական հետապնդումներ իրականացնելու նպատակով դատական և իրավապահ համակարգերի օգտագործումը հակասում են ՀՀ ստանձնած միջազգային, այդ թվում՝ որպես Եվրոպայի Խորհրդի անդամ պետության պարտավորություններին,

- փաստում է, որ տեղի ունեցողն անմիջականորեն հրահրվում, ուղղորդվում եւ համակարգվում է երկրի բարձրագույն իշխանության ներկայացուցիչների կողմից, ինչը խարխլում է երկրի սահմանադրականության հիմքերը, քայքայում է հանրային վստահությունը, խեղում է արդարադատության համակարգը և կազմաքանդում է իրավական պետության հիմքերը, որոնք ինքնին մարդու և պետական իշխանության դեմ ուղղված հանցագործություններ են,

-իր լիակատար համերաշխությունն է հայտնում բոլոր քաղբանտարկյալներին, քաղհալածյալներին եւ նրանց ընտանիքներին,

-պահանջում է դատարանների անկախության ապահովում, ընդդիմադիր գործիչների նկատմամբ իրականացվող հետապնդումների դադարեցում, բոլոր քաղբանտարկյալների ազատ արձակում,

- հրավիրում է Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի, միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բոլոր դիվանագիտական ներկայացուցչությունների ուշադրությունը տեղի ունեցող բացահայտ հակաժողովրդավարական և հակահիրավական գործընթացների վրա՝ ակնկալելով հստակ գնահատականներ Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից իշխանության ճյուղերի միջև հավասարակշռման և փոխզսպման մեխանիզմների խաթարման և քաղաքական զանգվածային բռնաճնշումների առնչությամբ,

- վերահաստատում է Հայաստանի Հանրապետության հանձնառությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան իրականացնել քաղբանտարկյալների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայտարարության ընդունման հրատապությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավական և ժողովրդավարական ակնհայտ հետընթացի և օրեցօր ահագնացնող քաղաքական բռնաճշումների հանգամանքներով: